

**ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ**

04 դեկտեմբեր 2017, № 21. 1

**«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՇՏԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՒՀՈՒՄ
ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՇՊՀ գիտական խորհուրդը **n p n 2 ու մ է.**

1. Հաստատել ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցը և ներկայացնել ԿԳՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ըն դունման պահից:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ

**«Շիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում
իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված հաշվետվության մեջ
ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ բուհում
ձեռնարկված միջոցառումների մասին**

Հաղ` ռեկտոր Ս. Մինասյան

Ռեկտոր Ս. Մինասյանը, դիմելով նիստին ներկա անդամներին, իր խոսքում նշեց, որ դեռևս 10 օր առաջ գիտական խորհրդի անդամներին և բուհի ստորաբաժանումների ղեկավարներին ուղարկվել են ինչպես ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվությունն ու հաշվետվության ամփոփ ներկայացումը տեղեկանքի տեսքով, այնպես էլ հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումները, միջոցառումների ժամանակացույցն ու որոշ կետերի վերաբերյալ դիտարկումները: Վերջիններս կազմվել են ՇՊՀ-ի պրոռեկտորներ Ե. Մերոբյանի, Ա. Տարմանյանի և նախկին պրոռեկտոր, ներկայիս բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկանի ժ/պ Բ. Պողոսյանի կողմից:

Նշեց, որ վերջին շրջանում բուհին վերաբերող շահարկումները ցավալիորեն դարձել են համապետական քննարկման խնդիրներ` ոչ մի աղերս չունեն բուհի ուսումնագիտական և կառավարման գործունեության հետ: Դրանք բուհից դուրս որոշ մարդկանց անձնական շահերի արդյունք են, որին բուհի 400 աշխատակցից ոմանք կարող էին ինչ-որ ձևով աջակցել, ինչն էլ, թերևս, օրինաչափ է...

Սակայն, գերծ մնալով դրանց վերլուծությունից, ռեկտորի նախաձեռնությամբ գիտխորհրդում քննարկվեցին միայն ուսումնագիտական գործունեությանն ու կառավարմանը առնչվող հարցերը, որոնք արտահայտված են ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցում:

Ռեկտորը ներկայացրեց, որ հաշվետվության մեջ նշված դիտարկումները աշխատանքային շտկվող բացթողումներ են, մինչդեռ անհարկի շահարկումների արդյունքում դրանք չափազանց ուռճացվեցին, այսինքն` ինչ-ինչ խնդիրների համադրմամբ գործադրվեց «հնարք» բուհը և բուհի ռեկտորին վարկաբեկելու համար: Չհասնելով ցանկալիին` մինչև օրս շարունակում են փորձը բուհի աշխատանքը ապակայունացնելու` ցանկացած ձեռնարկ անհարկի շահարկելով: Անցած երկու ամիսների ընթացքում բուհի ստորաբաժանումների ղեկավարների և պրոֆեսորադասախոսական համակազմի` ռեկտորի հետ, ինչպես նաև առանձին քննարկումների արդյունքում բոլորը եկել են այն եզրահանգման, որ ամեն ինչ շինծու է եղել: Նշվեց, որ բուհի հեղինակության հետ կապված ցանկացած շինծու սադրանք և շահարկում կստանա իր համապատասխան գնահատականը. ապրում ենք իրավական երկրում: Այնուհետև հավելվեց, որ համալսարանի աշխատանքային անդորրի և նպաստավոր բարեկիրթ միջավայրի ապահովման համար պատասխանատու է ինքը և հորդորեց ապավինել իրեն:

Թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցում ներառված թերացումներից մեծ մասն արդեն շտկվել են 2017.10.02-ի գիտական խորհրդի թիվ 18 նիստով, իսկ մյուս թերությունները կշտկվեն` ըստ կազմված ժամանակացույցի:

Սակայն, ըստ Ս. Մինասյանի, դրանով չպետք է բավարարվել, քանի որ այն կենդանի զարգացող գործընթաց է և շարունակական զարգացման ու բարելավման կարիք ունի: Իսկ թերություններից որոշները, չնայած գործընթացի կանառնակարգային ճիշտ

իրականացմանը, արդյունք են թերի փաստաթղթավորման, որոնց շտկման համար մշակվում են և կգործարկվեն համապատասխան կարգեր:

Գիտական խորհրդի անդամները, հիմք ընդունելով Ե. Սերոբյանի, Ա. Տարմանյանի և Բ. Պողոսյանի կողմից ներկայացված մեկնաբանությունները, ինչպես նաև ուսումնասիրությունների առիթով տրվող շահարկումների վերաբերյալ ռեկտոր Ս. Մինսայանի հաղորդումը. պրոֆեսոր Ս. Սարգսյանի առաջարկությամբ որոշեցին հաստատել ՇՊՀ-ում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների ժամանակացույցը և ներկայացնել ԿԳՆ:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում ՀՀ ԿԳՆ կողմից իրականացված ստուգումների արդյունքում

կազմված հաշվետվության մեջ ներառված թերությունների և բացթողումների շտկման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների

N	Հաշվետվությունում նշված թերություն/բացթողում	Թերությունների/բացթողումների շտկմանն ուղղված գործողություններ	Պատասխանատու(ներ)	Գործողությունների իրականացման ժամանակացույց	
				սկիզբ	ավարտ
1	Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիս 4-ի թիվ 526-Ն որոշման 4-րդ գլխի 16 կետը և 17-րդ գլխի 108-րդ կետը	Համալսարանի հոգաբարձուների խորհրդին առաջարկել իրականացնել 2017թ. տարեկան ֆինանսական հաշվետվություններ	Համալսարանի ռեկտոր	2018թ. հունվար	2018թ. ապրիլ
2	Համալսարանի գրադարանային ֆոնդը չի հաշվառվել և գույքագրվել	Իրականացնել համալսարանի գրադարանային ֆոնդի գույքագրում՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի հունիսի 2-ի թիվ 102 հրամանին համապատասխան	<ul style="list-style-type: none"> Գրադարանի տնօրեն Գլխավոր հաշվապահ 	2017 թ. դեկտեմբեր	2018թ. մարտ
3	Դասաբաշխումները կատարված են ոչ հավասարաչափ և չի պահպանվել «Ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.01.2008 որոշումը	Լրամշակել և հաստատել «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության դասախոսի ծանրաբեռնվածության ձևավորման հիմնական նորմեր փաստաթուղթը՝ առաջնորդվելով կառավարության որոշումամբ	<ul style="list-style-type: none"> Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, Գիտական 	2018թ. հունվար	2018թ. փետրվար

		<ul style="list-style-type: none"> Նշված թերությունները վեր հանված և ուղղված են 2017-2018 ուստարվա հոկտեմբերի 02 գիտական խորհրդով հաստատված լրամշակված դասաբաշխումներում 	քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր		
4	ՇՊՀ մագիստրատուրայի առկա համակարգում ընդունելության մրցույթը իրականացնելիս չի պահպանվել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգի 6-րդ կետի առաջին պարբերության պահանջները	Լրամշակել և հաստատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կանոնակարգը՝ ավելացնելով ընթացակարգային բոլոր պահանջները	<ul style="list-style-type: none"> Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր 	2018թ. հունվար	2018թ. փետրվար
5	Բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի թերություն, որտեղ խախտված է լիցենզավորման կարգի պահանջը	Վերանայել և վերակնքել բազային հաստատությունների հետ կնքված պրակտիկաների պայմանագրերը՝ պահպանելով լիցենզավորման կարգի պահանջները	<ul style="list-style-type: none"> Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, 	2018թ. հունվար	2018թ. մարտ

6	<p>«Իրավագիտություն», «Քաղաքագիտություն», «Սոցիոլոգիա» մասնագիտությունների գծով չի պահանջվել պրոֆեսորադասախոսական կազմի պահանջները՝ խախտելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները</p>	<p>Ռեկտորի հրամանով ստեղծել հանձնաժողով(ներ), որը կվերանայի «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջների համապատասխանությունը համալսարանում գործող բոլոր մասնագիտությունների ուղղությամբ և կձեռնարկի միջոցառումների շարք շտկումներ կատարելու նպատակով</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր 	<p>2018թ. հունվար</p>	<p>2018թ. մարտ</p>
7	<p>Լիցենզավորման մասին ԿԳ նախարարություն ներկայացված հաշվետվությունների բացակայությունը</p>	<p>Ռեկտորի հրամանով ստեղծել հանձնաժողով(ներ), որը ճիշտ ժամկետներում կիրականացնի ՀՀ Կառավարության 2009թ.-ի հուլիսի 9-ի N 808-Ն որոշման 17-րդ և 19-րդ հավելվածների 7-րդ կետի պահանջը՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ ԿԳ նախարարության լիզենզավորման բաժին ներկայացնելով լիցենզիաների պահանջների կայունության վերաբերյալ հաշվետվություն</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, • Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր 	<p>2018թ. հունվար</p>	<p>2018թ. մարտ</p>
8	<p>Հաստատված ուսումնական պլաններում չեն պահպանվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման համար պարտադիր առարկաների ուսուցանվող մասով</p>	<p>Վերանայել ուսումնական պլանները ՀՀ «Կրթության մասին» նոր օրենքի հաստատումից հետո՝ համապատասխանեցնելով օրենսդրական դաշտով սահմանված պահանջներին</p>	<ul style="list-style-type: none"> • Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, 	<p>2018 թ. մարտ</p>	<p>2018թ. մայիս</p>

			<ul style="list-style-type: none"> Գիտական քաղաքականության և արտաքին համագործակցության կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր 		
9	Տարբեր գործընթացներում փաստաթղթային հիմքերի (ֆակուլտետների և ամբիոնների արձանագրություններ, որոշումներ, քննարկումներ և այլն) բացակայություն	<ul style="list-style-type: none"> Մշակել և հաստատել փաստաթղթաշրջանառության ուղեցույց՝ նշելով յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները 	<ul style="list-style-type: none"> Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման և գործատուների հետ համագործակցության կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր, 	2018թ. հունվար	2018թ. մայիս

Նշենք, որ հաշվետվությունում առկա բացթողումների և թերությունների ներքոնշյալ խնդիրները վերանայվել և շտկվել են 2017թ.-ի հոկտեմբերի 2-ի գիտական խորհրդի որոշմամբ.

- նոր մշակված ուսումնական պլաններով ուսումնական գործընթացը կազմակերպվում է միայն 2017-2018 ուստարվա առաջին կուրս ընդունված ուսանողների համար,
- բակալավրի կրթական աստիճանի առկա ուսուցման 2-րդից 4-րդ և հեռակա ուսուցման 2-րդից 5-րդ, ինչպես նաև մագիստրոսի կրթական աստիճանի առկա ուսուցման 2-րդ կուրսի սովորողների համար գործող ուսումնական պլանները ամբիոններում քննարկվել և ենթարկվել են մասնակի փոփոխությունների՝ դուրս գալով ուսումնառության գործընթացի անընդհատությունից և շարունակականությունից: Փոփոխությունների արդյունքում բացառված են առարկաների անհարկի համընկնումները, կրկնումներն ու բացթողումները,

- առկա և հեռակա ուսուցման բակալավրի կրթական աստիճանում դասընթացների «ինտեգրված» ձևով իրականացումը դադարեցված է և լրամշակված դասաբաշխումներով. այն կազմակերպվում է առանձին:
- անկախ խմբում սովորող ուսանողների թվաքանակից, լսարանային դասընթացները կազմակերպվում են ուսումնական պլաններով հատկացված լսարանային ժամաքանակին համապատասխան: Հետևաբար, դասախոսը ևս ծանրաբեռնված է 100%-ով, որն արտացոլվում է լրամշակված նոր դասաբաշխումներում: